

«Միախար Սեբաստացի»

կրթահամալիր

Հեղինակ՝ Անահիտ Հարությունյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ

ՈՒՍՈՒՑՄԱՆ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

3-րդ դասարան

2018-2019 ուստարի

Բովանդակությունը

Դոնալդ Բիսեթ «Մոռացված ծննդյան օրը»

Դոնալդ Բիսեթ «Ղիփն ու գիհին»

Դոնալդ Բիսեթ «Ցանկությունների ծառը»

Դոնալդ Բիսեթ «Աշխարհը շուտ է եկել»

Դոնալդ Բիսեթ «Գոճին, որը սովորել էր թռչել»

Դոնալդ Բիսեթ «Ոստիկան Արթուրն ու նրա Հարրի անունով նժույզը»

Դոնալդ Բիսեթ «Ճանապարհորդուհի Միրանդան»

Տեղեկատվական տեքստ. Բաղեր

Դոնալդ Բիսեթ «Վագրի վրա մոնչացող տղան»

Տեղեկատվական տեքստ. Վագրեր

Դոնալդ Բիսեթ «Գորգի տակ»

Մոռացված ծննդյան օրը

Շոնայդ Բիսեթ

Կար-չկար աշխարհում մի մեծ փիղ կար: Նա ապրում էր Ուիփսնեյդյան կենդանաբանական այգում իր կնոջ ու ձագի հետ, որի անունը Յալմար էր:

Փիղ հայրիկը շատ մեծ էր: Փիղ մայրիկն էլ էր մեծ: Եվ նույնիսկ Յալմարին ոչ ոք չէր կարող ասել, թե փոքր է: Փղերը փոքրիկ չեն լինում: Մի գեղեցիկ օր էլ Փիղ մայրիկը և Փիղ ձագուկը տեսան, որ Փիղ հայրիկը կանգնած է գլխի վրա:

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Փիղ մայրիկը:

— Ուզում եմ մի բան հիշել,— պատասխանեց Փիղ հայրիկը:

— Ի՞նչ ես ուզում հիշել:

— Եթե իմանայի,— պատասխանեց Փիղ հայրիկը, այսպես չէի տանջվի: Ճի՞շտ է, թանկագինս:

— Յալմար,— ասաց Փիղ մայրիկը:— Շուտ վազիր ու գտիր այն, ինչ մոռացել է հայրիկը:

Ու Յալմարը վազեց նախ ճանապարհով, հետո բարձրացավ բամբուկների պուրակի մոտի բլրակը ու նստեց մի քիչ շունչ առնելու և նայելու համար, թե ինչպես են ամպերը երկնքում բռնոցի խաղում:

Հանկարծ նրա ականջով ընկավ ինչ-որ մեկի լացի ձայնը: Լալիս էին շատ մոտիկ մի տեղ, թեև Յալմարը չէր տեսնում, թե ով է:

Ուստի նա ասաց.

— Մի լա... Ուզո՞ւմ ես, օգնեմ քեզ:

Լացը դադարեց:

— Դու ո՞վ ես,— հարցրեց Յալմարը:

— Մոռացված ծննդյան օրը: Եվ չգիտեմ, թե ումն եմ:

— Վա՛յ,— ասաց Յալմարը:— Ա՛յ քեզ բան: Իսկ տոնական տորթ ունե՞ս:

— Իհարկե: Առանց տորթի՝ ի՞նչ ծննդյան օր: Իմ տորթի վրա վեց հաստ մոմ կա: Ուրեմն, այսօր լրանում է ինչ-որ մեկի վեց տարին:

«Ինչ լավ է, երբ վեց տարեկան ես,— մտածեց Յալմարը:— Շատ լավ է: Գրեթե այնքան լավ, որքան՝ յոթը: Հինգ տարին էլ վատ չէ, այսինքն՝ չորսն էլ՝ ոչինչ: Բայց եթե ութ տարեկան ես... երբ ութ տարեկան ես, ուրեմն, արդեն կիսով չափ մեծահասակ ես: Բայց, թերևս, ամենից լավն այն է, երբ վեց տարեկան ես»:

— Ափսո՛ս, շա՛տ ափսոս,— ասաց նա:— Բայց քեզ օգնել չեմ կարող: Ես ուղղակի չգիտեմ, թե ով է մոռացել իր ծննդյան օրը:

Ու Յալմարը տուն շտապեց: Երբ ներս մտավ, Փիղ հայրիկը արդեն ոչ թե գլխի վրա էր կանգնած, այլ սեղանի մոտ նստած՝ ճաշում էր:

— Հիշեցի,— ասաց Փիղ հայրիկը:— Ես այդպես էլ գիտեի, որ դա երեկ էր լինելու, կամ վաղը, կամ այսօր: Այդպես էլ գիտեի:

— Ի՞նչը այսօր,— հարցրեց Յալմարը:

— Որ այսօր քո ծննդյան օրն է,— ասաց Փիղ մայրիկը, մտնելով սենյակ:— Այսօր դու լրացրիր քո վեց տարին:

Յալմարը շատ հուզվեց ու ետ վազեց դեպի բամբուկների պուրակի մոտ գտնվող բլրակը:

— Լսիր,— գոչեց նա:— Պարզվում է, որ դու ԻՄ ծննդյան օրն ես: Այսօր լրանում է իմ վեց տարին:

— Ուռա՛,— գոչեց մոռացված ծննդյան օրը:— Ուռա, Ուռա, Ուռա:

Երեկոյան թեյելիս, Յալմարը մի տոնական տորթ ստացավ՝ վրան էլ վեց մոմ: Նա կնճիթը ձգեց ու միանգամից փչեց-մարեց բոլոր մոմերը:

«Ինչ լավ է,— մտածեց նա:— Շատ լավ է, երբ վեց տարեկան ես»:

1. Դուրս գրի՛ր անհականալի բառերը ու բացատրի՛ր [անցանց բառարանի](#) օգնությամբ:
2. Պատմի՛ր փղերի ընտանիքի մասին:
3. Պատմի՛ր Յալմարի մասին:
4. Երբ մոռանում ես ինչ-որ բան, ինչպե՞ս ես փորձում հիշել:
5. Գրի՛ր բառեր, որոնք ծննդյան օր ունեն:
6. Պատմի՛ր քո ծննդյան տոնի մասին: Պատումդ հրապարկի՛ր բլոգում:
7. Այս հեքիաթը պատմի՛ր Մոռացված ծննդյան օրվա անունից:

Ղիփն ու գիհին

Հեռավոր, շատ հեռավոր ժամանակներում բլուրների միջև ընկած աճում էր գիհին:

Նա երբեք քաղաք չէր տեսել, բայց շատ լավ գիտեր, թե ինչպիսին է քաղաքի կյանքը, որովհետև քամին միշտ էլ նորություններ էր բերում: Քամին ծովից թռչում էր նախ դեպի քաղաք, իսկ հետո անմարդաբնակ կանաչ բլուրներով հասնում էր հովիտ, որտեղ աճում էր գիհին: Եվ ծառը մե՛րթ լսում էր ծովային շոգենավերի շչակների ձայնը, մե՛րթ շների հաչոցը, մե՛րթ մանուկների ծիծաղը, մե՛րթ էլ ինչ-որ մեկի հեռախոսային զրույցը: Նրան էին հասնում ճայերի ճիչերն ու շոգեքարշերի սուլոցները: Քամին նրան էր հասցնում բազմաթիվ ձայներ:

Գիհին սիրում էր լսել քամուն, ու երբ քամին մեղմանում էր, ծառն սկսում էր ձանձրանալ ու իրեն միայնակ էր զգում: Շուրջը ոչ ոք չկար, միայն արևն էր գլխավերևում, կամ էլ լուսինն ու աստղերը: Երբեմն նրա ճյուղերին նստում էին թռչունները, բայց դա էլ հազվադեպ էր պատահում: Եվ մի գեղեցիկ առավոտ գիհին հանկարծ լսեց՝ թը՛մփ, թը՛մփ, Թ՛Ը՛ՄՓ. ձայնն ավելի էր սաստկանում, ս ս ս տ կ ա ն ու մ, Ս Ա Ս Տ Կ Ա Ն Ո Ի Մ: Եվ հետո բլրակի գագաթին հայտնվեց Փ Ի Ղ Ը, որի անունը Ղ Ի Փ էր: — Բարև,— ասաց փիղը:

— Բարև,— պատասխանեց գիհին:— Քո անունը Կենգուրո՞ւ է:

— Ինչպես թե... Ես փիղ եմ, անունս էլ՝ Ղիփ է:

— Ա՛-ա՛,— ասաց գիհին:— Ուրախ եմ, որ քեզ տեսա:

— Գիտե՞ս,— ասաց Ղիփը,— մեջքս քոր է գալիս:

Փիղը նստեց գիհու տակ ու մեջքը սկսեց քսել ծառաբնին: Եվ քորն անմիջապես անցավ:

Եվ գիհին նրան առաջարկեց.

— Այն դեզից մի խուրձ խոտ վերցրու, նստիր կողքիս և մի քիչ գրուցենք: Իսկ թե ուզենաս, ես նորից կքորեմ քո մեջքը:

Ղիփը մի խուրձ խոտ բերեց ու նստեց գիհու տակ, խոտն էլ դրեց կողքին, որ սիրտն ուզելուն պես՝ մի քիչ ուտի: Փղերը խոտ շատ են սիրում: Շոկոլադով թխվածքն էլ են սիրում, միայն թե Ղիփը թխվածք չուներ: Այսպես նստած գրուցեցին, հետո փիղը ննջեց: Եվ հովտում դարձյալ տիրեց լռություն:

Հանկարծ, որտեղից որտեղ, հայտնվեց մի պառավ: Նստեց նրանց կողքին ու սկսեց կար անել: Կարը արեց-վերջացրեց և այն է, ուզում էր ասեղը պահել, բայց անզգուշաբար ձեռքից զցեց խոտի դեզի մեջ: Այո՛, հեշտ բան չկարծեք խոտի դեզում ասեղ գտնելը:

— Արթնացի՛ր,— ձայն տվեց նա փղին:— Օգնի՛ր, որ գտնեմ իմ ասեղը:

— Ղիփը արթնացավ ու մտածեց. «Իհարկե, հեշտ բան է խոտի դեզում ասեղ գտնելը. ոչ ոքի համար հեշտ բան չէ, բացի փղից»:

Նա կնճիթը ձգեց, փչեց խոտի վրա. խոտը ցրիվ եկավ, իսկ ասեղը մնաց այնտեղ, ուր ընկել էր: Չէ՞ որ ասեղը խոտից ծանր է:

— Այ, ապրես,— ասաց պառավը և փղին շոկոլադով թխվածք տվեց:

Երբ պառավը գնաց, Ղիփը նստեց գիհու տակ, սկսեց խոտ ուտել, քորեց

մեջքը, իսկ հետո ականջ դրեց քաղաքային նորություններին, որոնք բերում էր քամին:

Գիհին շատ ուրախ էր, որ փիղն ընդմիջտ մնաց իր հետ:

1. Դուրս գրի՛ր անհականալի բառերը ու բացատրի՛ր [անցանց](#) [բառարանի](#) օգնությամբ:
2. Ներկի՛ր այն հատվածը, թե քամին ինչպես էր քաղաքային նորություններ բերում:
3. Շարունակի՛ր նախադասությունները.

Գիհին երբեք

Գիհին շատ լավ գիտեր

Գիհին սիրում էր

4. Պատմի՛ր Ղիփի անունով փղի մասին:
5. Պատմի՛ր մյուս հերոսների մասին:
6. Հորինի՛ր: Հրապարկի՛ր բլոգումդ:

Ասեղը, որն ապրում էր խոտի դեզում

Ցանկությունների ծառը

Դոնալդ Բիսեթ

Մի ծառ կանգնած էր այգում: Արևի շողերն ընկնում էին նրա վրա, քամին թեթև վազվզում էր ճյուղերի միջով, իսկ տերևները շշնջում էին. «Ցանկություն՝ ւն, ցանկություն՝ ւն, ցանկություն՝ ւն պահի՛ր»: Ծառը սովորական չէր, կախարդական էր: Ով կանգնե՞ր ծառի տակ ու ցանկություն պահեր, նրա ցանկությունը կկատարվեր: Ծառի կողքին մի տնակ կար: Տնակում մի գիրուկ ծերուկ էր ապրում: Նրա անունը Ուիլիամ Քեդոզան Սմիթ էր: Նա օճառ էր վաճառում գյուղի խանութում և չէր սիրում փոքրիկ տղաներին ու աղջիկներին: Մի օր նա կանգնեց կախարդական ծառի տակ ու ասաց.

- Ուզում եմ, որ մեր թաղում ապրող բոլոր աղջիկներն ու տղաները հայտնվեն Լուսնի վրա: Հենց նա այս բառերն ասում է, բոլոր տղաներն ու աղջիկները հայտնվում են Լուսնի վրա: Այնտեղ ցուրտ էր ու տխուր, փոքրիկները սկսում են լաց լինել: Բայց նրանք այնքան հեռու էին, որ մայրիկները չէին կարող լսել նրանց ձայները: Հենց որ երեխաները հայտնվում են Լուսնի վրա, ծառի վրայի բոլոր թռչունները էլ չեն երգում: Իսկ մի կեռնեխ նայում է պարոն Սմիթին ու ասում.

- Ես ուզում եմ, որ բոլոր երեխաները նորից վերադառնան: Պարոն Քեդոզան Սմիթն ասում է.

- Ուզում եմ, որ Լուսնի վրա հայտնվեն: Իսկ կեռնեխը՝ «Ուզում եմ, որ վերադառնան»: Երեխաները գնալով ավելի ու ավելի են շփոթվում, չեն հասկանում, թե որտեղ են՝ Երկրի՞, թե՞ Լուսնի վրա: Պարոն Սմիթը ոտքը խփեց գետնին ու ասաց. «Ուզում եմ... », բայց չհասցրեց շարունակել,

որովհետև կեռնեիք շատ արագ ասաց. «Ուզում եմ, որ պարոն Սմիթը բարի դառնա»: Եվ պարոն Սմիթը, ով հենց նոր պատրաստվում էր ասել. «Ուզում եմ, որ բոլոր երեխաները հայտնվեն Լուսնի վրա», հանկարծ միտքը փոխեց, քորեց գլուխն ու ասաց.

- Ուզում եմ, որ բոլոր երեխաները կեսօրին գան ինձ հյուր՝ թեյ խմելու, մենք թխվածք կուտենք ու նարնջի հյութ ու լիմոնադ կխմենք: Իսկ ես այլևս օձառ չեմ վաճառի, փոխարենը հրուշակեղենի խանութ կբացեմ, թող բոլորն ինձ Ուիլիամ Քեդոգան Սմիթի փոխարեն պարզապես Բիլ Սմիթ ասեն: Հեյ-հո՛, հեյ-հո՛: Նա երեք անգամ գլուխկոնծի տվեց, իսկ ծառի վրայի թռչունները նորից սկսեցին երգել: Արևը շողում էր, քամին կամացուկ վազվզում էր ծառի ճյուղերի մեջ, իսկ տերևները շշնջում էին. «Ցանկություն՝ ւն, ցանկություն՝ ւն, ցանկություն՝ ւն պահիր»:

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը և [առցանց բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Պատմի՛ր ծառի մասին: Ինչո՞ւ այն սովորական ծառ չէր:
3. Պատմի՛ր Ուիլիամ Քեդոգան Սմիթի ու նրա ցանկության մասին:
4. Պատմի՛ր Ուիլիամ Քեդոգան Սմիթի ու Բիլ Սմիթի մասին:
5. Դուրս գրի՛ր կեռնեիսի ցանկությունը:

«

6. Ցանկությունների ծառին ի՞նչ ցանկություններ կհայտնես: Պատումդ հրապարակի՛ր բլոգում:

Աշխարհը շուտ է եկել

Դոնալդ Բիսեթ

Այլիս անունով մի ագռավ էր ապրում: Ավելի ծույլ ագռավ աշխարհը դեռ չէր տեսել: Երբեմն նա նույնիսկ թռչելիս էլ էր քնում և շատ զարմանալի ու տարօրինակ երազներ էր տեսնում:

Մի անգամ նա այնքան խորն էր քնել, որ սկսեց շրջված թռչել, և մինչ թռչում էր՝ մի երազ տեսավ. շրջված երազ...

Մոռան կատուն շատ էր սիրում մկներ որսալ: Սպիտակեղենի զամբյուղում երկու մկնիկ տեսնելով, գաղտագողի մոտեցավ նրանց:

— Տե՛ս, տե՛ս՝ կատուն,— ասաց մի մուկը՝ մյուսին:— Հիմա մենք նրան կորսանք:

Մոռանը զարմացավ. «Գժվե՞լ են... Մի՞թե մկները կատուներ են որսում»,— մտածեց նա:

Բայց երբ մկնիկները սկսեցին հալածել նրան, Մոռանը զարմանքից, առանց ետ նայելու հազիվ կարողացավ փախչել:

«Այսպիսի կյանք չի լինի. ամեն ինչ հակառակ է, ամեն ինչ շրջված»,— մտածեց կատուն:

Ու այդ պահին էլ նրա դիմաց ելավ Հաֆ անունով վիթխարի շունը: Հաֆը զայրացած գոմոաց Մոռանի վրա:

Մոռանը այն է, ուզում էր փախչել ու թաքնվել ծառի կատարին, բայց հանկարծ մտածեց. «Եթե այս աշխարհը շուտ է եկել, ուրեմն Հաֆը ինքը պիտի փախչի ինձնից»:

Եվ Մոռանը նետվեց Հաֆի վրա, իսկ Հաֆն էլ, հասկանալի է, հազիվ կարողացավ փախչել ու ազատել իր գլուխը:

«Այս ինչ հրաշք է,— մտածեց Մոռանը:— Կատուները շներին են հալածում, մկները կատուներ են որսում... Կյանքումս այդպիսի բան չեմ տեսել»:

Նրա աչքն ընկավ ճանապարհին ու տեսավ մի կաթնավաճառ, մի սայլակ ու մի ձի:

Սայլակին լծվել էր կաթնավաճառը, իսկ ձին նստել էր սայլակի վրա ու քշում էր նրան. «Նո-ո՛»: Եվ կաթնավաճառն էլ հնազանդվելով, արագացնում էր ընթացքը:

Հետո Մոռանը հանդիպեց երկու երեխայի, որոնք իրենց ծնողների հետ էին: Ու այդ երեխաները կշտամբում էին ծնողներին.

— Անպիտաններ... Հիմա տուն կհասնենք, և դուք անմիջապես կպառկեք քնելու: Որպես պատիժ՝ ընթրիքից կզրկվեք:

— Ի-ի-ի՛... Էլ չենք անի,— հեծկլտում էին ծնողները: Արդեն մթնում էր, բայց լուսնի ու աստղերի փոխարեն երկնքում փայլեց արևը:

«Բայց հիմա գիշեր է,— մտածեց Մոռանը:— Իսկ գիշերով երկնքում հայտնվում են լուսինն ու աստղերը, էլ ի՞նչ գործ ունի այստեղ արևը»:

— Հապա, հեռացի՛ր,— ասաց նա արևին:

— Չեմ հեռանա,— ասաց արևը:— Այս աշխարհը շուտ է եկել, և ես էլ պետք է գիշերները լուսավորեմ, որպեսզի ցերեկով էլ մի քիչ խաղալու ժամանակ ունենամ:

«Մրա վերջը ի՞նչ է լինելու»,— սարսափահար մտածեց Մոռանը: Եվ պատահաբար վեր նայելով, տեսավ Ալիսին, որ թռչում էր շրջված՝ ոտքերը դեպի վեր:

— Հե՛յ, Ալիս: Արթնացի՛ր,— գոչեց նա:

Ալիսը արթնացավ ու շարունակեց թռչել, ասես ոչինչ էլ չէր եղել: Հենց այդ պահին էլ արևը մայր մտավ, լուսինը ծագեց, աստղերը փայլեցին, կաթնավաճառի ձին սկսեց ինքը քաշել սայլակը, Հաֆը ընկավ Մոռանի ետևից, իսկ Մոռան էլ մկներին այնքան հալածեց, մինչև նրանք դարձյալ թաքնվեցին սպիտակեղենի զամբյուղում: Մոռանը զգաց, որ քաղցը տանջում է իրեն և խոհանոց շտապեց՝ ձուկ ուտելու և վրայից էլ կաթ խմելու համար:

Իսկ ծուլիկ Ալիսը վերադարձավ ծառի կատարին գտնվող իր բույնը, տեղավորվեց ու նորից քնեց:

— Ղա՛,— ասաց նա քնելիս:— Ինչ զվարճալի երագ էր:

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը ու բացատրի՛ր [առցանց](#)
[բառարանի](#) օգնությամբ:

2. Պատմի՛ր ագռավի մասին:

3. Թվարկի՛ր շրջված երազի հերոսներին:

4. Այլս անունով ագռավի երազում աշխարհը շուտ էր եկել:

Շարունակի՛ր լրացնել, թե այդ երազում ո՞ր հերոսը ի՞նչ էր անում:

Կատուները շներին են ..., իսկ մկները կատուներ են ...:

Սայլակին լծվել էր ..., իսկ ... նստել էր սայլակի վրա ու քշում էր նրան:

Երեխաները ... էին ծնողներին, իսկ ծնողները ...:

Արևը գիշերները ..., իսկ ցերեկները ...:

5. Քո կարծիքով՝ ի՞նչ է ծուլությունը: Քո ծուլության մասին պատմի՛ր:

6. Ի՞նչ կլիներ, եթե աշխարհը շուտ գար:

7. Շրջված կամ շուտ եկած մտքեր հորինի՛ր:

8. Հորինի՛ր: Հրապարակի՛ր բլոգումդ:

Իմ գվարձալի ու տարօրինակ երազը

Գոճին, որը սովորել էր թռչել

Ռոնալդ Բիսեթ

Մի անգամ Իկար անունով գոճին եկավ Կախարդական աղբյուրի մոտ և խնդրեց, որ նա կատարի իր ցանկությունը: Գոճին վաղուց էր երագում թռչել սովորել: Իզուր չէր, որ նրա անունը Իկար էր:

— Եթե շատ ես ուզում, կարող եմ այնպես անել, որ դու թռչես,— ասաց Կախարդական աղբյուրը:— Բայց դրա համար նախ քեզ պետք է դարձնել թռչուն:

— Ոչ, ես ուզում եմ գոճի մնալ: Գոճի, որը նաև թռչել կարողանա,— ասաց Իկարը:

— Բայց գոճիները թռչել չեն կարող,— առարկեց Կախարդական աղբյուրը:

Իկարը շատ վշտացավ ու գնաց տուն: Ճանապարհին նա մի բանի մասին էր միայն մտածում. այնուամենայնիվ, ինչպես թռչել սովորել:

Հաջորդ օրը վաղ առավոտյան նա անտառ գնաց և յուրաքանչյուր թռչունից մեկական փետուր խնդրեց: Իհարկե, նրան ոչ ոք չմերժեց:

— Երևի ուզում ես թռչել սովորե՞լ,— հարցրեցին նրանք:

— Այո,— պատասխանեց Իկարը:

Նա բոլոր փետուրները կապեց իրար, ու հիանալի թևեր ստացվեցին: Հետո բարձրացավ ծովափնյա լեռան գագաթը: Նրա ետևից լեռան գագաթ բարձրացան կատուն ու մուկը, մի թռչուն և երկու ճագար, բզեզների մի մեծ խումբ և նույնիսկ մի խիտունջ. բոլորն էլ ուզում էին տեսնել, թե ինչ է լինելու:

Իկարը ամրացրեց թևերը, թափահարեց ու դանդաղ սավառնեց դեպի վեր:
Ա՛յ, թե երջանկություն էր: Հանդիսականներն էլ շատ ուրախացան, իսկ
ամենափոքրիկ բզեզիկը քիչ մնաց մեռներ հիացմունքից:
Իկարը բարձրացավ վեր, շատ վեր ու գրեթե հասավ Արևին:

— Ես խիզախ գոճի եմ,— ինքն իրեն գովեց նա:— Իսկ Կախարդական
աղբյուրն ասում էր, թե գոճիները չեն կարող թռչել: Կարո՞ղ եմ:

Եվ հենց այդ պահին նա այնքան մոտեցավ արևին, որ թռկերը, որոնցով
կապել էր թևերը, այրվեցին արևի ջերմությունից: Թևերն ընկան ցած:
Թևերից հետո էլ՝ գոճին: Նա մի քանի անգամ գլուխկոնձի տվեց օդում և
շրմփաց ծովի մեջ:

Խեղճ Իկարը ոտքից գլուխ թրջվեց, բայց լավն այն էր, որ կարողացավ
լողալով բարեհաջող ափ հասնել: Հետո վազեց տուն, մայրիկի մոտ:

— Մի վշտացիր, իմ փոքրիկ Իկար,— ասաց նրան մայրիկը,— Չէ՞ որ դու,
այնուամենայնիվ, կարողացար Թ Ռ Չ Ե Լ:

Եվ մայրիկը նրան մուրաբա ու թխվածք տվեց:

Իսկ ընկերները հյուր եկան ու խմբով երգեցին.

*Միրելի Իկար, մեր փոքրիկ գոճի,
Եկել ենք այսօր ձեր տուն՝ խնջույքի.
Մենք պիտի պարենք ու պիտի երգենք,
Մենք պիտի պարենք ու պիտի երգենք,
Եվ թռչող գոճուն մեր գովքը անենք:*

Հենց նույն օրը երեկոյան Իկարը այցելեց Կախարդական աղբյուրին: Եվ նայելով խորը, շատ խորը ջրհորի մեջ, նայելով կլորակ ջրի հայելուն, ասաց.

— Դու իրավացի ես. գոճիները թռչել չեն կարող:— Եվ այտի վրայով արցունքներ գլորվեցին:

— Գլուխդ բարձր պահիր,— ասաց Կախարդական աղբյուրը:— Համենայնդեպս, կեցցես դու:

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը ու բացատրի՛ր [առցանց](#) [բառարանի](#) օգնությամբ:

2. Ինչո՞ւ էր Գոճիի անունը Իկար: Պատմի՛ր նրա երազանքի մասին:

3. Ինչպե՞ս թռավ Իկարը: Պատմի՛ր:

4. Ինչո՞ւ Իկարը ցած ընկավ:

5. Հորինի՛ր: Հրապարկի՛ր բլոգումդ:

Ես կախարդական աղբյուրի մոտ

Ոստիկան Արթուրն ու նրա Հարրի անունով նժույգը

Դոնալդ Բիսեթ

Ոստիկան Արթուրը և նրա ոստիկանական նժույգը, որի անունը Հարրի էր, մի ժամանակ ապրում էին Լոնդոնում: Երկուսն էլ շատ չարաճճի էին: Իր կապույտ համազգեստը հագած, գոտուց ռետինե մահակը կախ, ամեն օր Արթուրը հեծնում էր Հարրիին և շրջում Լոնդոնով մեկ: Հարրին շատ էր սիրում քայլել որևէ ավտոբուսի ետևից և այնքան արտաշնչել ապակու վրա, մինչև որ ապակին քրտներ: Հետո էլ Արթուրը կանգնում էր ասպանդակներին, ձգվում էր առաջ ու քրտնած ապակու վրա զանազան ծիծաղաշարժ մոտիթներ էր գծում: Հարրին էլ նայում էր այդ պատկերներին ու ծիծաղում:

Նրանք այնքան էին տարվել դրանով, որ այլևս անպիտան մարդկանց բռնելու ժամանակ չէր մնում: Ու մի գեղեցիկ օր էլ ոստիկանատան տեսուչ Ռեջինալդը կանչեց սերժանտին ու ասաց.

— Սերժանտ:

— Այո, սըր,— զգաստ կանգնելով պատասխանեց սերժանտը:

— Սերժանտ,— հարցրեց Ռեջինալդը,— ինչո՞ւ Արթուրը անպիտաններին չի բռնում:

— Զգիտեմ, սըր,— պատասխանեց սերժանտը:

— Պետք է պարզել, սերժանտ: Այդ գործը աչքաթող էք արել,— ասաց տեսուչ Ռեջինալդը:

— Լսում եմ, սրբ,— պատասխանեց Ջորջը (այդպես էր սերժանտի անունը) և պատիվ բռնեց:

Հետո ելավ փողոց, հեծավ իր ձին, որը շատ լավ ձի էր ու երբեք չէր ընկնում ավտոբուսների ետևից և չէր արտաշնչում ապակու վրա: Ջորջը սկսեց շրջել Լոնդոնով մեկ՝ Արթուրին և Հարրիին որոնելու և պարզելու համար, թե ինչով են նրանք զբաղված:

Ու, վերջապես, գտավ նրանց: Այդ պահին Հարրին արտաշնչում էր ավտոբուսի ետևի ապակուն, իսկ Արթուրը առաջ ձգված, քրտնած ապակու վրա ծիծաղելի մռութներ էր գծում:

«Ինչ չարաճճին եմ,— մտածեց սերժանտ Ջորջը:— Բայց շատ հետաքրքիր գործ է... Գուցե ե՞ս էլ փորձեմ»:

Եվ նա իր ձին քշեց ավտոբուսի ետևից, որպեսզի ձին արտաշնչի ետևի ապակուն: Երբ ապակին քրտնեց, Ջորջը ձգվեց առաջ և մատով գծեծ տեսուչ Ռեջինալդի դիմանկարը:

Այդ պահին նրան մեկ ուրիշ ոստիկան տեսավ: Ու այդ ուրիշ ոստիկանին էլ շատ դուր եկավ ուրախ զբոսանքը, ուստի որոշեց ինքն էլ փորձել:

Իսկ կարճ ժամանակ անց ամբողջ հեծյալ ոստիկանությունը ընկել էր ավտոբուսների ետևից: Ձիերը արտաշնչում էին ետևի ապակիներին, իսկ ոստիկանները ապակիների վրա մռութներ էին գծում:

Լոնդոնի բոլոր անպիտան խարդախները չգիտեին, թե ինչն ինչոց է, որովհետև ոչ ոք նրանց ետևից չէր ընկնում: — Ի՞նչ է պատահել ոստիկանությանը,— հարցնում էին նրանք իրար: Ու, վերջապես որոշեցին պարզել, թե ինչն է պատճառը: Եվ պարզեցին: Պարզեցին, որ ոստիկանները ժամանակ չունեն, որ ոստիկանները ավտոբուսների ետևի ապակիներին ծիծաղելի մոտիթներ են նկարում:

— Ուրախ զբաղմունք է,— ասացին անպիտանները:

Եվ վճռեցին այլևս խարդախություն չանել: Ամեն մեկը իր համար մի ձի գնեց, սովորեցրեց, որ ձին արտաշնչի ավտոբուսների ետևի ապակիներին, և իրենք սկսեցին քրտնած ապակիների վրա զանազան մոտիթներ նկարել:

Լոնդոնի ոստիկանության պետը շատ գոհ էր: Նա կանչեց Հարրիին ու Արթուրին և ասաց.

— Շատ խելացի բան էք մտածել: Երկուսդ էլ՝ շատ ապրեք: Եվ Արթուրին սերժանտի կոչում շնորհվեց:

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը ու բացատրի՛ր [առցանց բառարանի](#) օգնությամբ:
2. Նկարագրի՛ր ոստիկան Արթուրին:
3. Բնութագրի՛ր ոստիկան Արթուրին:
4. Պատմի՛ր ոստիկան Արթուրի և Հարրի նժույզի ուրախ զբաղմունքի մասին:

5. Թվարկի՝ ր մյուս հերոսներին:

6. Պատմի՝ ր ըստ տրված վերնագրերի: Պատումների ձայնագրի՝ ր:
Հրապարակի՝ ր բլոգում:

Ոստիկանների ուրախ զբաղմունքը

Անպիտանների որոշումը

Գոհ ոստիկանապետը

7. Հորինի՝ ր նոր պատմություն: Հրապարակի՝ ր բլոգում:

Վարորդ Արթուրն ու նրա Կարմրիկ անունով ավտոբուսը

Ճանապարհորդուհի Միրանդան

Դոնալդ Բիսեթ

Եղել է, չի եղել, Աֆրիկայում մի բադ է եղել: Ճիշտը որ ասենք, նա անգլիական բադ էր, քանի որ ծնվել էր Անգլիայում ու անունն էլ Միրանդա էր:

Նա վաղուց էր երագում հայրենիք վերադառնալ, որովհետև շատ էր ուզում խաղալ անգլիացի տղաների ու աղջիկների հետ: Ուստի նա հրաժեշտ տվեց իր բարեկամներին, թեև շատ ծանր էր այդ բաժանումը: Հրաժեշտ տվեց առյուծներին, վագրերին, կապիկներին, միայն թե՛ ոչ կոկորդիլոսներին: Նա կոկորդիլոսներին հանդուրժել չէր կարողանում:

Եվ համարձակ ճամփա ելավ:

Երկար, շատ երկար նա թռչում էր ջունգլիների վրայով, իսկ հետո երևաց ծովը:

Միրանդան թռավ հասավ Իտալիա: Ծովափին շատ երեխաներ կային: Նրանք խաղում էին ավազով, իսկ քիչ հեռու նստած ծնողները ոչինչ չէին անում: «Ի՛նչ հիմար ու անարդարացի բան է»,— մտածեց Միրանդան: Հետո նա թռավ սարերի վրայով ու պարզ է, որ ստիպված դեպի վեր ու ավելի վեր էր բարձրանում: Իսկ ավելի վերևում ցուրտ էր ու ձյուն էր տեղում:

Հանկարծ նա լսեց, որ մեկը երգում է: Ձայնը լսվում էր մոտիկից ու ավելի մոտիկից: Նրան թվաց, թե երգում են ֆրանսիական «Սյուրլյուֆոն դ'Ավինյոնը», որը նշանակում է «Ավինյոնի կամրջի վրա»:

Եվ իրոք, քիչ անց, մառախուղի միջով սուրաց ֆրանսիացի ծիծեռնակների երամը, որը թռչում էր դեպի հարավ՝ Իտալիա: Միրանդայի մոտով անցնելիս, նրանք թևերը թափահարելով, ջերմորեն ողջունեցին: Եվ Միրանդան էլ նրանց պատասխանեց՝ իր թևերը թափահարելով:

Նա շատ էր հոգնել և ուտել էր ուզում: Ձյունը ավելի սաստիկ էր տեղում, և ոչինչ տեսանելի չէր: Ականջների մոտ սուլում էր քամին, ձյունը կուրացնում էր աչքերը, թռչելն ավելի ու ավելի էր դժվարանում: Բայց Միրանդան մտածում էր լոկ այն մասին, թե որքան լավ է ամառը անգլիական ճահիճներում, ու շուտափույթ հանդիպում էր երագում անգլիացի երեխաների հետ: Նրա կտուցն ուղղված էր Լոնդոնի կողմը: Այդպես նա թռչում էր շատ երկար ժամանակ: Քամին հանդարտվեց աստիճանաբար, ձյունն էլ դադարեց տեղալուց: Եվ իր գլխավերևում Միրանդան աստղեր տեսավ, իսկ ցածում՝ մեծ քաղաքի թարթող լույսերը: Դա Լոնդոնն էր:

Միրանդան վայրէջք կատարեց քաղաքի լճակի վրա:

Լճակի կենտրոնում մի կղզյակ կար, իսկ կղզյակի վրա՝ ազատ մի բույն. ասես միտումնավոր նախապատրաստել էին հենց Միրանդայի համար: Միրանդան շատ ուրախացավ:

Նախաճաշեց ճահճային խոտերով, հետո նստեց բնում ու արդեն սկսել էր ննջել, երբ հանկարծ լսեց մի ձայն.

— Միրանդա՛ ... Միրանդա՛ ...

— Այստեղ եմ,— պատասխանեց Միրանդան:

Նա ելավ բնից ու լողաց դեպի լճափ: Այստեղ նա տեսավ փոստատար տղային:

— Հեռագիր ունես,— ասաց տղան:— Խնդրում եմ, ստորագրիր, որ ստացել ես:

Միրանդան ստորագրեց: Հետո հեռագիրը կտուցին, լողաց դեպի ետ, դեպի իր բույնը:

Նա հուզմունքով բացեց հեռագիրը: Պարզվեց, որ հեռագիրն ուղարկել են աֆրիկացի տղաներն ու աղջիկները: Ահավասիկ, թե ինչ էին նրանք գրել.

Միրանդա, Միրանդա, բարևում ենք քեզ:

Մաղթում ենք շոգ ամառ: Դու քեզ լավ նայիր:

Մենք քեզ սիրում ենք: Շուտ պատասխանիր:

Դիմացի փողոցի տներում մարեցին լույսերը: Միրանդան լսեց, թե ինչպես են մարդիկ իրար բարի գիշեր մաղթում: Հետո շուրջը լռություն սիրեց: Միրանդան հեռագիրը թաքցրեց մի թևի տակ, գլուխը՝ մյուս թևի և խորը քուն մտավ:

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը ու բացատրի՛ր [առցանց բառարանի](#) օգնությամբ:
2. Ի՞նչ գիտես բաղերի մասին: Պատմի՛ր:
3. Պատմի՛ր Միրանդա բաղի մասին:
4. Քո կարծիքով ի՞նչ է հրաժեշտը:

5. Թվարկի՛ր, թե Միրանդան Աֆրիկայից մինչև Լոնդոն ճամփորդելիս ի՞նչ տեղերով է անցել: Փորձի՛ր կազմել Միրանդա բաղի ճամփորդական քարտեզը:
6. *«Ի՛նչ հիմար ու անարդարացի բան է»,— մտածեց Միրանդան:* Ինչո՞ւ Միրանդան այդպես մտածեց, փորձի՛ր բացատրել:
7. Միրանդայի անունից պատասխանի՛ր աֆրիկացի երեխաների հեռագրին:
8. Հորինի՛ր: Պատմությունդ հրապարակի՛ր բլոգում:

Միրանդա բաղի արկածները Լոնդոնում

Կարդա՛: Ըստ գույների ներկի՛ր հատվածները՝ օգտվելով աղյուսակում ներկայացված նշաններից:

	Նշանը	Գույնը
Գիտեի	V	Գույնը
Նոր իմացա	!	Գույնը
Հետաքրքիր է	*	Գույնը
Հարց ունեմ	?	Գույնը

Բադեր



Բադերը ջրլող թռչուններ են:

Հայտնի են 147 տեսակի բադեր, իսկ Հայաստանում կան 29 տեսակի բադեր՝ լայնակտուց բադ, կարմիր բադ, կոնչան բադ, մեծ սղոցակտուց բադ, մոխրագույն բադ, սպիտակագլուխ բադ, իսայտաբադ, կարապներ, սուզաբադեր, տուրպաններ:

Բադերը փոքրամարմին են, մինչև 5 կգ կարող են կշռել: Պարանոցը և ոտքերը կարճ են: Ոտքերը ծածկված են թեփուկներով: Բադերը մեծ մասամբ լողում են մաքուր ջրերում, իսկ ձագ հանելու ժամանակ դուրս են գալիս ցամաք: Բադերի տարբեր տեսակներ ունեն տարբեր գունավորում՝ մոխրագույն, իսայտաբղետ, սպիտակ, կապույտ, սև և այլն:

Բաղերը բնադրում են գետնին, խոտերի մեջ, իսկ որոշ տեսակներ՝ ծառերի փչակներում, թփերի վրա: Դնում են 5-12 ձու, թուխս են նստում գարնան վերջին և ամռան սկզբին:

Բաղերն ամենակեր են, սնվում են բույսերով, միջատներով, թրթուրներով, իխունջներով, ծովային մանր անողնաշարավոր կենդանիներով: Հազվադեպ են սուզվում, գերադասում են լայն կտուցով հասնել հատակին՝ ջրից դուրս թողնելով պոչը:

Ընտանի բաղերը սերում են վայրի՝ *կոնչան բաղից*, որը մտնում է իսկական կամ ազնիվ բաղերի խմբի մեջ: Ընտանի բաղերն ունեն համեղ միս, փափուկ աղվամազ և ամուր փետուրներ: Նրանց կերակրում են ուտելիքի մնացորդներով, եփած կարտոֆիլով, ծլած հացահատիկով: Նրանք արագ են մեծանում և 70 օրվա ընթացքում հասնում են մինչև 3-4 կգ-ի:

Դուրս գրի՛ր անհասկանալի բաղերը ու բացատրի՛ր [առցանց բառարանի](#) օգնությամբ:

Վագրի վրա մոնչացող տղան

Դոնալդ Բիսեթ

Հնդկաստանում Սադի անունով մի տղա կար: Նա սիրում էր վագրերի վրա մոնչալ:

— Զգո՜ւյ՛շ, -ասում էր մայրը,- վագրերը չեն սիրում, որ իրենց վրա մոնչում են:

Բայց ո՞ւմ ես ասում, մի ականջով մտնում էր, մյուսով դուրս գալիս: Մի օր էլ, երբ մայրը խանութ էր գնացել, Սադին դուրս եկավ ու գնաց վագր գտնելու, որ վրան մոնչա:

Երկար չփնտրեց: Վագրն էլ ծառի ետևում Սադիին էր սպասում. հենց Սադին մոտեցավ, նա դուրս թռավ ու մոնչաց.

— Ռոռոռոռո՜ւն...

Սադին էլ մոնչաց.

— Ռոռոռոռո՜ւն...

«Սա ինձ ինչի՞ տեղ է դրել, — նեղացած մտածեց Վագրը, — կատվի՞, նապաստակի՞, սկյուռի՞: Հը՞, ոնց որ «սկյուռ» են ասում, հա՞»:

Մյուս օրն էլ վագրը Սադիին տեսավ, թե չէ, ծառի ետևից դուրս թռավ և առաջվանից բարձր մոնչաց.

— Ռոռոռոռո՜ւն...

— Հա՜, վա՛գր. ողջո՜ւյն, -ասաց Սադին ու թփթփացրեց վագրի ուսին:

Վագրը չէր սիրում, որ իր ուսին թփթփացնում էին: Այդ պատճառով էլ բարկացած հեռացավ: Նա ճանկերն էր սրում, պոչը գետնին խփում, փորձում էր ավելի զարհուրելի մոնչալ:

— Ախր ես Վագր եմ, — կրկնում էր նա, — Վա՜գր, Վագոռը՜ն... հետո գնաց գետից ջուր խմելու:

Խմե՛ց, կշտացա՛վ ու նայեց ջրին: Գետի միջից մի գեղեցիկ վագր էր նայում՝ դեղի՛ն, սև շերտերո՛վ, երկար պոչո՛վ: Նա նորից մոնչաց ու այնքան բարձր, որ ինքն էլ սարսափած փախավ: Վազե՛ց, վազե՛ց ու հոգնեց:

«Ումի՞ց եմ փախչում, — մտածեց նա, — չէ՞ որ մոնչացողը ես էի: Չէ՛, այդ տղայի պատճառով խելքս լրիվ թոցրել եմ: Չեմ հասկանում՝ ինչո՞ւ է նա վագրերի վրա մոնչում»:

Մյուս օրը, երբ Սադին անցնում էր իր կողքով, վագրը կանգնեցրեց նրան.
— Ինչո՞ւ ես մոնչում վագրերի վրա:

— Ախր նրանցից վախենում եմ, է՛, — ասաց Սադին, — իսկ երբ ես եմ նրանց վրա մոնչում, կարծես հակառակն է ստացվում:

— Հա՞, — զարմացավ վագրը:

— Վագրերը աշխարհի ամենասարսափելի կենդանիներն են, — շարունակեց Սադին, — միայն քաջերը չեն վախենում նրանց վրա մոնչալ:

Վագրին դա շատ դուր եկավ:

— Կոկորդիլոսից էլ են սարսափելի՞, — հարցրեց նա:

— Հա՛, բա ի՞նչ, — պատասխանեց Սադին:

— Առյուծների՞ց էլ:

— Ըհը՛:

Վագրը հաճույքից մոլտաց: Տղան նրան արդեն դուր էր գալիս:

— Բայց դու շատ լավ տղա ես, հա՛, — ասաց վագրը ու լիզեց Սադիին: Այդ օրվանից նրանք հաճախ էին միասին թափառում ու մոնչում իրար վրա:

գարհուրելի - սարսափելի

1. Դուրս գրի՛ր անհասկանալի բառերը ու բացատրի՛ր [առցանց բառարանի](#) օգնությամբ:
2. Ի՞նչ է նշանակում.
ա. մի ականջով մտնում է, մյուսով դուրս գալիս -
բ. սա ինձ ինչի՞ տեղ է դրել -
գ. խելքը թոցնել -
3. Ինչո՞ւ էր Սադին մոնչում վագրերի վրա:
4. Ներկի՛ր այն հատվածը, որը պատմում է վագրի կատաղության մասին:
5. Վագրի անունից պատմի՛ր «Վագրի վրա մոնչացող տղան»:
6. Պատմի՛ր վագրի մասին:
7. Վագրը հաճույքից մոլտաց: Ինչո՞ւ:
8. Հեքիաթի ո՞ր հատվածն է Սադիին բնութագրում, ներկի՛ր այդ հատվածը:
9. Ինչպիսի՞ տղա էր Սադին:

10.Քո կարծիքով՝ ամեն անգամ վագրին հանդիպելին Սաղին ի՞նչ էր մտածում:

11. Եթե Սաղին և վագրը միասին ապրեին, իրենց տան ցուցանակին ի՞նչ կգրեին:

12. Հորինի՛ր: Հրապարակի՛ր բլոգումդ:

Ժպտացող վագրը

Կարդա՛: Ըստ գույների ներկի՛ր հատվածները՝ օգտվելով աղյուսակում ներկայացված նշաններից:

	Նշանը	Գույնը
Գիտեի	V	Կանաչ
Նոր իմացա	!	Կարմիր
Հետաքրքիր է	*	Կարմիր
Հարց ունեմ	?	Կապույտ

Վագր



Վագրը կատվազգի գիշատիչ է, որը հանդիսանում է խոշորագույն ցամաքային գիշատիչներից մեկը, իր չափերով զիջելով միայն սպիտակ և գորշ արջերին: Գոյություն ունի վագրերի 9

ենթատեսակ: Վագրերի 3 ենթատեսակը վերացել են դեռևս 19-րդ դարի սկզբին: Ենթատեսակներից ամենատարածվածը *բենգալյան վագրերն* են:

Վագրը բազմանում է 2–3 տարին մեկ, ունենում է 2–4 ձագ: Ապրում է 20 և ավելի տարի:

Վագրերին որսում են, որովհետև նրանց մորթին թանկարժեք է: Այժմ վագրերի թիվը կրճատվել է, նրանք գրանցված են Կարմիր գրքում:

Վագրը ամենախոշոր վայրի կատուն է, սակայն նրա ենթատեսակները իրարից չափերով բավականաչափ տարբերվում են: Մայրցամաքային ենթատեսակներն կղզիաբնակներից խոշոր են: Ամենախոշոր

ենթատեսակներն են *բենզալյան* և *ամուրյան* վագրերը: Արու ամուրյան վագրի մարմնի երկարությունը առանց պոչի կարող է կազմել 4 մետր, իսկ քաշը՝ 300 կգ:

Վագրերը տարածքային կենդանիներ են, վարում են միայնակ կյանք և պաշտպանում են իրենց զբաղեցրած տարածքը, որը նշում են տարբեր եղանակներով: Դրանցից մեկն անհատական հոտով նշելն է:

Ժամանակակից Հայկական լեռնաշխարհում տարածված է եղել *Կասպյան վագրը*, որն այժմ վերացած տեսակ է:

Վագրն ապրում է եղեգի, հնդկեղեգի մացառուտներում, թփուտներում, լեռնային անտառներում:

Վագրը հիանալի որսորդ է. վազում է արագ և կարող է երկար հետապնդել որսին: Սակայն մեծ մասամբ հարձակվում է դարանից: Վագրի հզոր ժանիքներից կենդանին հազվադեպ է կարողանում փրկվել: Թաթի մի հարվածով նա կարող է ձի սպանել, 5 մետրանոց ցատկեր անել, հիանալի լողալ, իսկ կշտանալու համար նրան պետք է 30–50 կգ միս: Հիմնականում հարձակվում է եղջերուների, վայրի խոզերի, այծքաղների, նաև ընտանի կենդանիների վրա: Եթե որսն անհաջող է լինում, վագրը սնվում է գորտերով, մկներով, նույնիսկ՝ մորեխներով: Կարող է նաև երկար ժամանակ մնալ առանց սննդի: Վագրերը որսում են մեծ մասամբ հիվանդ ու թույլ կենդանիների և բնության սանիտարի դեր են կատարում: Մարդու վրա հարձակվում են, երբ վերջինս փորձում է բռնել կամ սպանել վագրի ձագին, վիրավորում է գազանին կամ էլ խանգարում որսը ճաշակելուն:

Վագրն ունի շերտավոր գունավորում: Վագրի մեջքը և կողքերը կարմրաշիկավուն են, ստորին մասը՝ սպիտակ՝ լայնական նեղ, սև շերտերով: Շերտավոր գունավորման շնորհիվ վագրը գերազանց քողարկվում է թփերի մեջ և նույնիսկ մոտիկից չի նկատվում:

Վագրերը հեշտությամբ են ընտելանում անազատ պայմաններին:

Դուրս գրի՝ ր անհասկանալի բառերը ու բացատրի՝ ր [անցանց բառարանի](#) օգնությամբ:

Գորգի տակ

Դոնալդ Բիսեթ

Վագրն ու ձին ապրում էին հյուրասենյակի գորգի տակ: Նրանք հին բարեկամներ էին: Նրանց դուր էր գալիս հյուրասենյակում ապրելը, որովհետև նրանք սիրում էին հյուրեր ընդունել: Այդ տանն էր ապրում նաև մի աղջիկ: Նրա անունը Շելլա էր: Մի անգամ աղջիկն հարցրեց նրանց.

- Դուք ինչպե՞ս եք տեղավորվում գորգի տակ:
- Շատ հասարակ: Մենք հո իրական չենք, մենք երևակայական ենք,- պատասխանեցին նրանք:
- Ես երևակայական վագր եմ:
- Ես երևակայական ձի եմ:
- Բա քո խոտը ո՞ր է,-հարցրեց Շելլան ձիուն:
- Գորգի տակ,-պատասխանեց ձին,-չե՞ որ խոտն էլ է երևակայական:
- Քո ոսկորներն էլ են գորգի տակ,-հարցրեց աղջիկը վագրին:
- Ոսկորնե՞րը... Էլ որտե՞ղ լինեն,-պատասխանեց վագրը և շոյեց աղջկան:

Հետո նա մտավ գորգի տակ: Ձին էլ մտավ: Շելլան մենակ մնաց սենյակում: Նա հանեց թուղթը, մի քանի կտոր շաքար նկարեց և շա՛տ կամաց դրեց գորգի տակ:

Քիչ հետո նա խրթխրթոց լսեց՝ խըրթ-խըրթ-խըրթ...ձին հաճույքով շաքար էր ուտում: Աղջիկը թղթի կտորի վրա գրեց. «Ի՞նչ են սիրում վագրերը» և գրածը կամա՛ց դրեց գորգի տակ:

Գորգի տակից փսփսացին, քիչ հետո վագրը գլուխը դուրս հանեց և պատասխանեց.

- Խոտով բրդում:

Շեյլան չհավատաց ականջներին:

- Այ դու անպետք ձի,-ասաց նա,-խոտով բրդում ոչ թե վագրերն են սիրում, այլ՝ ձիերը: Շուտ արա, գնա վագրին հարցրու, թե ինքն ինչ է ուզում:

Ձին պահ մտավ, վագրը դուրս եկավ.

- Ես ձեռքի ժամացույց եմ ուզում,-ասաց նա,- որ իմանամ ժամաը քանի՞սն է:

- Եղավ,-ասաց Շեյլան:

Աղջիկը ձեռքի ժամացույց նկարեց և տվեց Վագրին: Հետո ձիու համար խոտով բրդումներ նկարեց: Վագրն էլ մտավ գորգի տակ: Մի՛ քիչ հետո երկուսով կրկին հայտնվեցին:

- Մեծ-մեծ Շնորհակալություն քեզ, Շեյլա,- ասացին նրանք և համբուրեցին աղջկան:

- Մտածեք, թե ձեզ ինչ է պետք և շուտ ասեք,-ասաց Շեյլան: -Թե չէ իմ քնելու ժամանակն է, պիտի գնամ քնեմ:

- Դե՛... մենք հովանոց կուզեինք,-ասացին վագրն ու ձին:

- Հովանո՞ց,-գարմացավ Շեյլան: – Ի՞նչ է, գորգի տակ անձրև է գալի՞ս:

- Հա՛, հասկացա, դա երևակայական անձրև է:

- Այո, երևակայական,-ասացին նրանք: Աղջիկը նրանց հանար հովանոց նկարեց:

- Շնորհակալություն,-ասացին վագրն ու ձին,- բարի գիշեր:

- Բարի գիշեր,-պատասխանեց Շեյլան և գնաց քնելու: Հետո հանկարծ նրա գլխում մի միտք ծնվեց. «Երևի վատ բան է, համարյա վիրավորական, երբ դու նոր, գեղեցիկ հովանոց ունես, իսկ անձրև չի գալիս».: Նա մեծ թղթի վրա անձրև նկարեց, զգույշ մտավ հյուրասենյակ և անձրևը դրեց գորգի տակ:

Երբ առավոտյան Շեյլին հյուրասենյակ մտավ, հայտնվեց ջրում: Իսկ վագրն ու ձին նստել էին բաց հովանոցի մեջ և լողում էին, ոնց որ նավակի մեջ լինեին:

- Երևի հորդ անձրև եմ նկարել,-մտածեց Շեյլան:

Վաղը չէ մյուս օրը նա կրկին հյուրասենյակ մտավ: Մայրիկն այդ ժամանակ գորգն էր ավլում: Ո՛չ ջուր կար սենյակում, ո՛չ հովանոց, ո՛չ

վագր, ո՛չ էլ ձի, ոչ մի բան չէր մնացել: Շեյլան վերցրեց նկարելու տետրը և մուշ-մուշ քնած վագր ու ձի նկարեց: Մայրիկը գնաց: Շեյլան նստել էր վառարանի մոտ և կրակին էր նայում: Հյուրասենյակում լուռ էր, միայն գորգի տակից խոնփոցի ձայն էր լսվում:

1. Ի՞նչ է նշանակում երևակայական: Ի՞նչ է նշանակում իրական:
Փորձի՛ր բացատրել:

2. Քո կարծիքով ինչպիսի՞ն էին երևակայական ձին և վագրը:

3. Պատմի՛ր աղջկա մասին:

4. Ի՞նչ կուզենայիր ունենալ գորգի տակ: Ինչո՞ւ:

5. Նկարագրի՛ր ձեր հյուրասենյակը: Իսկ դու ու՞մ հետ և որտե՞ղ կուզեիր ապրել: Պատումդ ու նկարդ հրապարակի՛ր բլոգում:

6. Գրի՛ր բառեր, որոնք.

ա. շաքարի պես խրթխրթան են -

բ. խոտով բրդուճի պես տարօրինակ են -

գ. հորդ անձրևի պես առատ են -

7. Շարունակի՛ր հորինել: Պատմությունդ վերնագրիր: Հրապարակիր բլոգում:

Հյուրասենյակում լուռ էր, միայն գորգի տակից խոնփոցի ձայն էր լսվում:

8. Նկարի՛ր այն, ինչը կուզեիր, որ հայտնվեր՝

ա. սեղանիդ տակ

բ. մահճակալիդ տակ:

Նկարների հրապարակի՝ ը բլոգում: